

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԻՁԵՎ

Հաշվի առնելով, որ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը հիմնվել է Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի 1949 թ. դեկտեմբերի 3-ի հմ. 319 (IV) բանաձեւի հիման վրա,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունը, ընդունված Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1950 թ. դեկտեմբերի 14-ի հմ. 428 (V) իր բանաձեւով, inter alia, նախատեսում է, որ Գերագույն հանձնակատարը, գործելով Գլխավոր ասամբլեայի ղեկավարության ներքո, կտրամադրի միջազգային պաշտպանություն կանոնադրության շրջանակներում ընդգրկվող փախստականներին, համապատասխան կառավարությունների միջոցով կփնտրի փախստականներին վերաբերող խնդրի մշտական լուծումներ, կառավարությունների հաստատմամբ՝ մասնավոր կազմակերպություններ՝ ոչլուրացնելու համար նշված փախստականների կամավոր հայրենադարձությունը կամ ասիմիլիացիան նոր ազգային համայնքների շրջանակներում,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն, Գլխավոր ասամբլեայի կողմից հիմնադրված օժանդակ մարմին է, որի կարգավիճակը, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը կարգավորված են Միավորված ազգերի արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին Կոնվենցիայով, որը ընդունված է Գլխավոր ասամբլեայի կողմից 1946 թ. փետրվարի 13-ին (այսուհետ՝ Գլխավոր կոնվենցիա),

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրության 16-րդ հոդվածը նշում է, որ Գերագույն հանձնակատարը ներկայացուցիչներ նշանակելու անհրաժեշտության վերաբերյալ կխորհրդակցի փախստականների բնակության վայր հանդիսացող երկրների կառավարությունների հետ, եւ յուրաքանչյուր երկրում, որը կճանաչի այդպիսի անհրաժեշտությունը, կարող է նշանակել տվյալ երկրի կառավարության կողմից հաստատված ներկայացուցիչ,

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը ցանկանում են սահմանել պայմաններ, որոնց համաձայն գրասենյակը իր մանդատի սահմաններում պետք է ներկայացված լինի երկրում,

սույնով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը բարեկամական համագործակցության ոգով ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ՀՈՂՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակով կկիրառվեն հետեւյալ սահմանումները.

ա) "ՄԱՓԳՀ" նշանակում է՝ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատար:

բ) "Գերագույն հանձնակատար" նշանակում է՝ Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատար կամ պաշտոնյաներ, որոնց Գերագույն հանձնակատարը լիազորել է գործել իր անունից:

գ) "Կառավարություն" նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության Կառավարություն:

դ) "Յուրընկալ երկիր" կամ "երկիր" նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն:

ե) "ՄԱՓԳՀ գրասենյակ" նշանակում է՝ բոլոր գրասենյակները, շինությունները

եւ սարքավորումները, որոնք զբաղեցվել կամ տնօրինվում են երկրում:

գ) "ՄԱՓԳՅ ներկայացուցիչ" նշանակում է՝ ՄԱՓԳՅ պաշտոնյա, որը երկրում գտնվող ՄԱՓԳՅ գրասենյակի ղեկավարն է:

է) "ՄԱՓԳՅ պաշտոնյաներ" նշանակում է՝ ՄԱՓԳՅ անձնակազմի բոլոր անդամները, որոնք ծառայում են Միավորված ազգերի անձնակազմի կանոնակարգի կանոնների համաձայն, բացառությամբ այն անձանց, ովքեր ժամավճարային հիմունքներով աշխատանքի են ընդունվել տեղում, ինչպես նախատեսված է Գլխավոր ասամբլեայի հմ. 76 (1) բանաձեւով:

ը) "Գործուղված փորձագետներ" նշանակում է՝ ոչ ՄԱՓԳՅ պաշտոնյաներ կամ ՄԱՓԳՅ անունից ծառայություններ իրականացնող անձինք, որոնք ՄԱՓԳՅ-ի համար կատարում են հանձնարարություններ:

թ) "ՄԱՓԳՅ անունից ծառայություններ կատարող անձինք" նշանակում է՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք եւ նրանց ծառայողներ (ոչ հյուրընկալ երկրի քաղաքացիներ), որոնք վարձված են ՄԱՓԳՅ կողմից՝ նրա ծրագրերը իրականացնելու կամ իրականացմանը աջակցելու համար:

ժ) "ՄԱՓԳՅ անձնակազմ" նշանակում է՝ ՄԱՓԳՅ պաշտոնյաներ, գործուղված փորձագետներ եւ ՄԱՓԳՅ անունից ծառայություններ կատարող անձինք:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի նպատակը

Սույն Համաձայնագիրը սահմանում է այն հիմնական պայմանները, որոնց համապատասխան ՄԱՓԳՅ-ն իր մանդատի շրջանակներում պետք է համագործակցի Կառավարության հետ, բացի գրասենյակ կամ գրասենյակներ երկրում եւ հյուրընկալ երկրում կատարի միջազգային պաշտպանության եւ մարդասիրական օգնության իր գործառույթները՝ հօգուտ փախստականների եւ իր պաշտպանության տակ գտնվող այլ անձանց:

ՀՈԴՎԱԾ 3

Համագործակցության Կառավարության եւ ՄԱՓԳՅ-ի միջեւ

1. Համագործակցությունը Կառավարության եւ ՄԱՓԳՅ-ի միջեւ փախստականների եւ ՄԱՓԳՅ-ին առնչվող այլ անձանց միջազգային պաշտպանության եւ մարդասիրական օգնության ոլորտում պետք է իրականացվի ՄԱՓԳՅ կանոնադրության, ՄԱՓԳՅ-ի վերաբերյալ այլ համապատասխան որոշումների եւ բանաձեւերի հիման վրա, որոնք ընդունվել են Միավորված ազգերի մարմինների կողմից, ինչպես նաեւ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թ. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի եւ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1976 թ. արձանագրության 2-րդ հոդվածի հիման վրա:

2. ՄԱՓԳՅ գրասենյակը փախստականների եւ համապատասխան այլ անձանց համար ծրագրերի պատրաստման եւ վերանայման հետ կապված պետք է Կառավարության հետ խորհրդակցություններ անցկացնի եւ համագործակցի:

3. ՄԱՓԳՅ կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար, որոնք իրականացվելու են Կառավարության կողմից, Կառավարության եւ ՄԱՓԳՅ կողմից ստորագրվելիք համաձայնագրերում պետք է նշվեն ժամկետներն ու պայմանները (ներառյալ Կառավարության եւ Գերագույն հանձնակատարի պարտավորությունները՝ կապված ֆինանսական միջոցների, ապրանքների, սարքավորումների եւ ծառայությունների կամ փախստականների համար այլ օգնության տրամադրման հետ):

4. Կառավարությունը պետք է ՄԱՓԳՅ անձնակազմին հնարավորություն ընձեռի ցանկացած ժամանակ առանց խոչընդոտի այցելել փախստականներին եւ ՄԱՓԳՅ առնչվող այլ անձանց եւ ՄԱՓԳՅ ծրագրերի իրականացման վայրեր՝ դրանց իրականացման բոլոր փուլերի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4

ՄԱՓԳՅ գրասենյակ

1. Կառավարությունը ողջունում է, որ ՄԱՓԳՅ-ն հիմնում է գրասենյակ կամ գրասենյակներ երկրում՝ փախստականներին եւ ՄԱՓԳՅ առնչվող այլ անձանց միջազգային պաշտպանությունն ապահովելու եւ մարդասիրական օգնություն տրամադրելու համար:

2. ՄԱՓԳՅ-ն կարող է բացել երկրում ՄԱՓԳՅ գրասենյակ, որը ծառայելու է որպես տարածաշրջանային /տեղական գրասենյակ:

3. ՄԱՓԳՅ գրասենյակը, Գերագույն հանձնակատարի հանձնարարականների եւ իր մանդատի համաձայն, իրականացնելու է գործառույթներ փախստականների եւ իրեն առնչվող այլ անձանց համար (ներառյալ ՄԱՓԳՅ եւ երկրում գործող այլ կառավարական կամ ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ կապերի ստեղծումն ու պահպանումը):

ՀՈԴՎԱԾ 5 ՄԱՓԳՅ անձնակազմ

1. ՄԱՓԳՅ-ն կարող է երկրում գտնվող իր գրասենյակում նշանակել այնպիսի պաշտոնյաների կամ այլ աշխատակիցների, որոնք ինքը անհրաժեշտ է համարում միջազգային պաշտպանության եւ մարդասիրական օգնության իր գործառույթները կատարելու համար:

2. Կառավարությունը ժամանակ առ ժամանակ կտեղեկացվի պաշտոնյաների աստիճանակարգերի եւ այն պաշտոնյաների անունների մասին, որոնք ընդգրկված են այդ աստիճանակարգերում, եւ այլ աշխատակիցների մասին, որոնք նշանակված են երկրում գտնվող ՄԱՓԳՅ գրասենյակում աշխատելու համար:

3. ՄԱՓԳՅ պաշտոնյաներին, գործուղված փորձագետներին եւ այլ անձանց, որոնք իրականացնում են ծառայություններ ՄԱՓԳՅ անունից, Կառավարությունը կտրամադրի ինքնությունը հաստատող հատուկ փաստաթուղթ, որը կհաստատի նրանց կարգավիճակը՝ սույն Համաձայնագրի համաձայն:

4. ՄԱՓԳՅ-ն կարող է պաշտոնյաներ նշանակել, որպեսզի նրանք երկիր այցելեն Կառավարության համապատասխան պաշտոնյաների կամ փախստականների հետ կապված աշխատանքների մեջ ներգրավված այլ մասնակիցների հետ խորհրդակցություն անցկացնելու եւ համագործակցելու նպատակով՝ կապված.

ա) միջազգային պաշտպանության եւ մարդասիրական օգնության ծրագրերի վերանայման, պատրաստման, վերահսկման եւ գնահատման հետ,

բ) ՄԱՓԳՅ կողմից տրամադրված ապրանքների, սարքավորումների եւ այլնի առաքման, ստացման, բաշխման կամ օգտագործման հետ,

գ) փախստականների հիմնախնդրի լուծման համար մշտական լուծումներ որոնելու հետ, եւ

դ) որեւէ այլ հարցի հետ, որը առնչվում է սույն Համաձայնագրի կիրառմանը:

ՀՈԴՎԱԾ 6

Հարմարություններ ՄԱՓԳՅ մարդասիրական ծրագրերի իրագործման համար

1. Կառավարությունը, ՄԱՓԳՅ-ի հետ համաձայնեցնելով, պետք է ձեռնարկի ցանկացած միջոց, որը կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի ՄԱՓԳՅ պաշտոնյաները, գործուղված փորձագետները եւ ՄԱՓԳՅ անունից ծառայություններ կատարող անձինք չենթարկվեն այն կանոններին կամ այլ իրավական դրույթներին, որոնք կարող են խոչընդոտել սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործողություններին եւ ծրագրերին, եւ նրանց պետք է շնորհեն այնպիսի այլ արտոնություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել երկրում փախստականների համար ՄԱՓԳՅ մարդասիրական ծրագրերի արագ եւ արդյունավետ իրականացման համար: Սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան՝ նշված միջոցները պետք է ներառեն հաղորդակցման հարմարությունների տրամադրումը, օդային փոխադրությունների իրավունքների շնորհումը եւ ազատումը օդանավերի վայրէջքի վճարներից եւ ժողովներից՝ արտակարգ իրավիճակներում օգնություն բերող բեռնատար ինքնաթիռների թռիչքների դեպքում, փախստականների եւ/կամ ՄԱՓԳՅ անձնակազմի տեղափոխման համար գանձվող վճարներից:

2. Կառավարությունը, ՄԱՓԳՅ-ի հետ համաձայնեցնելով, պետք է օժանդակի ՄԱՓԳՅ պաշտոնյաներին գրասենյակային համապատասխան շինություններ գտնելու գործում եւ պետք է դրանք ՄԱՓԳՅ-ին տրամադրի անվճար կամ էժան գնով:

3. Կառավարությունը, ՄԱՓԳՅ-ի հետ համաձայնեցնելով, պետք է պայմանավորվի եւ ապահովի դրամական միջոցների փոխհամաձայնեցված քանակ, որպեսզի վճարի ՄԱՓԳՅ գրասենյակի տեղական ծառայությունների եւ հարմարությունների գինը, ինչպիսիք են գրասենյակի հիմնադրման, կահավորման, շահագործման եւ վարձակալման ծախսերը, եթե այդպիսիք կան:

4. Կառավարությունը պետք է երաշխավորի, որ ՄԱՓԳՅ գրասենյակը մշտապես ապահովված կլինի անհրաժեշտ կոմունալ ծառայություններով, եւ որ այդպիսի կոմունալ ծառայությունները կտրամադրվեն հավասար պայմաններով:

5. Կառավարությունը կձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի երաշխավորի ՄԱՓԳՅ անձնակազմի անվտանգությունն ու ապահովությունը: Մասնավորապես, նա կձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի պաշտպանի ՄԱՓԳՅ անձնակազմը, ՄԱՓԳՅ գրասենյակի շինությունները եւ սարքավորումները հարձակումներից կամ որեւէ այլ գործողություններից, որը խոչընդոտում է ՄԱՓԳՅ անձնակազմին ՄԱՓԳՅ մանդատը իրականացնելուն: Սա չի հակասում այն փաստին, որ ՄԱՓԳՅ գրասենյակների բոլոր շինությունները անձեռնմխելի են եւ գտնվում են ՄԱՓԳՅ բացառիկ վերահսկողության ներքո:

6. Կառավարությունը պետք է դյուրացնի ՄԱՓԳՅ տարբերի պետություններից հավաքագրված անձնակազմի համար բնակարանային համապատասխան հարմարություններ գտնելը:

ՀՈԴՎԱԾ 7

Արտոնություններ եւ անձեռնմխելիություններ

Կառավարությունը կկիրառի Գլխավոր կոնվենցիայի համապատասխան դրույթները ՄԱՓԳՅ, նրա սեփականության, դրամական միջոցների եւ գույքի, պաշտոնյաների եւ գործուղված փորձագետների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 8

ՄԱՓԳՅ գրասենյակը, նրա սեփականությունը, դրամական միջոցները եւ գույքը

1. ՄԱՓԳՅ, ազգային կամ միջազգային այն մարմինների կողմից, որոնք ՄԱՓԳՅ կողմից համապատասխան ձեւով հավատարմագրված են իրենց անունից գործելու համար՝ կապված փախստականներին մարդասիրական օգնություն տրամադրելու հետ, երկիր ներմուծված, երկրից արտահանված կամ երկրում ձեռք բերված որեւէ նյութ պետք է ազատվի բոլոր մաքսատուրքերից, արգելքներից եւ սահմանափակումներից, ինչպես նաեւ ուղղակի եւ անուղղակի հարկերից:

2. ՄԱՓԳՅ-ն պետք է օգտվի փոխանակման առավել բարենպաստ օրինական ընթացագրերից:

ՀՈԴՎԱԾ 9

Հաղորդակցության հարմարություններ

Կառավարությունը կապահովի, որ ՄԱՓԳՅ-ն հնարավորություն ունենա արդյունավետորեն եւ առանց արտոնագրի համար վճարելու օգտագործել իր սեփական ռադիո եւ այլ հեռահաղորդակցության սարքավորումները, ներառյալ արբանյակային կապի համակարգերը, այն ցանցերի հաճախականությունների միջոցով, որոնք սահմանված են իրավասու պետական մարմինների կողմից կամ համակարգվում են նրանց հետ՝ Միջազգային հեռահաղորդակցման միության գործող կանոններին եւ կորմերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

ՄԱՓԳՅ պաշտոնյաներ

ՄԱՓԳՅ ներկայացուցիչը, ներկայացուցչի տեղակալը եւ մյուս ավագ պաշտոնյաները, ինչպես նաեւ նրանց ամուսինները եւ նրանց խնամքի տակ գտնվող բարեկամները երկրում գտնվելու ընթացքում պետք է օգտվեն այն արտոնություններից եւ անձեռնմխելիություններից, ազատումներից եւ հարմարություններից, որոնք սովորաբար տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցիչներին: Այս նպատակով արտաքին գործերի նախարարությունը պետք է նրանց անուններն ընդգրկի դիվանագիտական ցուցակի մեջ:

ՀՈԴՎԱԾ 11

Տեղում հավաքագրված անձնակազմ, որը ժամավճարային հիմունքներով է աշխատանքի ընդունվել

1. Տեղում հավաքագրված եւ ՄԱՓԳՅ համար ծառայություններ կատարելու նպատակով ժամավճարով աշխատանքի ընդունված անձինք պետք է օգտվեն այն անձեռնմխելիությունից, որը կապված է նրանց պաշտոնական դիրքում գտնվելու ընթացքում արտահայտված կամ գրած խոսքերի եւ կատարած ցանկացած գործողության իրավական գործընթացի հետ:

2. Տեղում հավաքագրված անձնակազմի ծառայության ժամկետները եւ պայմանները պետք է համապատասխանեն Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան բանաձեւերին, կանոնակարգերին եւ կանոններին:

ՀՈԴՎԱԾ 12

ՄԱՓԳՅ անունից ծառայություններ մատուցող անձինք

Եթե կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել, Կառավարությունը ՄԱՓԳՅ անունից ծառայություններ մատուցող բոլոր անձանց, որոնք հյուրընկալ երկրի՝ տեղում հավաքագրված քաղաքացիներ չեն, պետք է շնորհի հետեւյալ արտոնությունները եւ անձեռնմխելիությունները՝

ա) իրենց պաշտոնական դիրքում գտնվելու ժամանակ արտահայտած բանավոր կամ գրավոր խոսքերի եւ կատարած բոլոր գործողությունների հետ կապված անձեռնմխելիության իրավական գործընթացից,

բ) ազատում Միավորված ազգերի կողմից նրանց վճարող աշխատավարձի եւ այլ վարձատրությունների հարկումից,

գ) անձեռնմխելիության ազգային ծառայություններ անցնելու պարտավորությունից,

դ) անձեռնմխելիություն իրենց ամուսինների եւ իրենց խնամքի տակ գտնվող բարեկամների հետ միասին ներգաղթելու սահմանափակումներից եւ օտարերկրացիներին գրանցելուց,

ե) փոխանակման առնչությամբ այն նույն արտոնությունները, ինչպիսիք տրամադրվում են համապատասխան Կառավարության դիվանագիտական առաքելությունների համեմատելի աստիճաններ ունեցող պաշտոնյաներին,

զ) միջազգային ճգնաժամի ժամանակ հայրենադարձության նույնատիպ հնարավորությունների ապահովում իրենց, իրենց ամուսիններին եւ իրենց խնամքի տակ գտնվող բարեկամներին, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական պատվիրակներին,

է) իրավունք՝ տվյալ երկրում պաշտոն ստանձնելու պահից առանց տուրք վճարելու ներմուծել իրենց կահույքը եւ իրերը,

ը) իրենց գործառույթների արդյունավետ կատարման համար անհրաժեշտ՝ առանց վճարի մուտքի վիզաների, արտոնագրերի եւ թույլտվությունների արագ ձեւակերպում եւ տրամադրում,

թ) ՄԱՓԳՅ մարդասիրական ծրագրերի իրականացման նպատակով, այնքան, ինչքան անհրաժեշտ է, ազատ տեղաշարժ երկրի ներսում, դեպի այդ երկիրը եւ երկից դուրս:

ՀՈԴՎԱԾ 13

Տարաձայնությունների կարգավորում

Սույն Համաձայնագրից ծագող կամ նրա հետ կապված ցանկացած տարաձայնություն Կառավարության եւ ՄԱՓԳՀ միջեւ կկարգավորվի բարյացակամորեն՝ բանակցությունների կամ կարգավորման համաձայնեցված այլ ուղիներով: Եթե այսպես տարաձայնությունը չի կարգավորվում, ապա այն, Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով, պետք է ներկայացվի միջնորդ դատարանին: Յուրաքանչյուր կողմ պետք է նշանակի մեկ միջնորդ դատավորի, եւ այդ երկու դատավորները պետք է նշանակեն երրորդին, որը պետք է լինի նախագահ: Եթե տարաձայնության կարգավորման խնդրանքը միջնորդ դատարան ներկայացնելուց հետո երեսույն օրվա ընթացքում կողմերից որեւէ մեկը չի նշանակում միջնորդ դատավոր, կամ երկու դատավորների նշանակվելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում չի նշանակվում երրորդ դատավորը, յուրաքանչյուր կողմ կարող է խնդրել Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ նշանակել դատավոր: Միջնորդ դատավորների բոլոր որոշումների համար պահանջվում է երկու ձայն: Միջնորդ դատարանի ընթացակարգը կսահմանվի դատավորների կողմից, իսկ դատավարության ծախսերը, համաձայն դատավորների որոշման, պետք է կրեն կողմերը: Դատական որոշումը պետք է պարունակի այն հանգամանքների շարադրանքը, որոնց վրա հիմնված է, եւ կողմերն այն պետք է ընդունեն որպես տարաձայնության կարգավորման վերջնական որոշում:

ՀՈԴՎԱԾ 14 Ընդհանուր դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Կառավարության կողմից վավերացման մասին Միավորված ազգերի փախստականների գծով Գերագույն հանձնակատարին ծանուցելու օրվանից եւ ուժի մեջ կմնա անորոշ ժամանակով:
2. Սույն Համաձայնագիրը պետք է մեկնաբանվի իր գլխավոր նպատակի լույսի ներքո, որը ՄԱՓԳՀ-ին հնարավորություն կտա փախստականների հետ կապված իր միջազգային մանդատը իրականացնել լիարժեքորեն եւ արդյունավետ, ինչպես նաեւ իրականացնել իր մարդասիրական նպատակները երկրում:
3. Ցանկացած համապատասխան հարց, որի վերաբերյալ սույն Համաձայնագրում նախատեսված չէ որեւէ դրույթ, Կողմերը պետք է կարգավորեն պահպանելով Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինների կողմից ընդունված համապատասխան բանաձեւերը եւ որոշումները: Յուրաքանչյուր Կողմ լիարժեքորեն եւ բարյացակամորեն քննության կառնի սույն կետի շրջանակներում մյուս Կողմի ցանկացած առաջարկություն:
4. Սույն Համաձայնագրի փոփոխման նպատակով խորհրդակցություններ կարող են անցկացնել Կառավարության եւ ՄԱՓԳՀ խնդրանքով: Փոփոխությունները պետք է կատարվեն համատեղ գրավոր համաձայնությամբ: Փոփոխությունները ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգի համաձայն:
5. Սույն Համաձայնագրի գործողությունը կդադարեցվի պայմանավորվող Կողմերից որեւէ մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ իր որոշման մասին մյուս կողմին գրավոր ծանուցելուց վեց ամիս հետո:

Կատարված է Երեւան քաղաքում, 2004 թ. նոյեմբերի 22-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ անգլերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թվականի ապրիլի 6-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006, 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 20

Co-operation Agreement
Between the Government of the Republic of Armenia and the Office
of the United Nations High Commissioner for Refugees

Whereas the Office of the United Nations High Commissioner for Refugees was established by the United Nations General Assembly Resolution 319 (IV) of 3 December 1949,

Whereas the Statute of the Office of the United Nations High Commissioner for Refugees, adopted by the United Nations General Assembly in its resolution 428 (V) of 14 December 1950, provides, inter alia, that the High Commissioner, acting under the authority of the General Assembly, shall assume the function of providing international protection, under the auspices of the United Nations, to refugees who fall within the scope of the Statute and of seeking permanent solutions for the problem of refugees by assisting governments and, subject to the approval of the governments concerned, private organizations to facilitate the voluntary repatriation of such refugees, or their assimilation within new national communities,

Whereas the Office of the United Nations High Commissioner is a subsidiary organ established by the General Assembly based on article 22 of the United Nations Charter, the status, privileges and immunities of which are regulated by the Convention on the Privileges and Immunities of the United Nations adopted by the General Assembly on 13 February 1946 (hereinafter: "the General Convention").

Whereas the Statute of the Office of the United Nations High Commissioner for Refugees provides in its Article 16 that the High Commissioner shall consult the governments of the countries of residence of refugees as to the need for appointing representatives therein and that in any country recognizing such need, there may be appointed a representative approved by the government of that country,

Whereas the Government of the Republic of Armenia and the Office of the United Nations High Commissioner for Refugees wish to establish the terms and conditions under which the Office, within its mandate, shall be represented in the country.

Now therefore, the Government of the Republic of Armenia and the Office of the United Nations High Commissioner for Refugees, in spirit of friendly co-operation, have entered into this Agreement.

Article I Definitions

For the purpose of this Agreement the following definitions shall apply:

a) "UNHCR" means the Office of the United Nations High Commissioner for Refugees.

b) "High Commissioner" means the United Nations High Commissioner for Refugees or the officials to whom the High Commissioner has delegated authority to act on his behalf.

c) "Government" means the Government of the Republic of Armenia.

d) "Host Country" or "Country" means the Republic of Armenia.

e) "UNHCR Office" means all the offices and premises, installations and facilities occupied or maintained in the country.

f) "UNHCR Representative" means the UNHCR official in charge of the UNHCR office in the country.

g) "UNHCR officials" means all members of the staff of UNHCR employed under the Staff Regulations and Rules of the United Nations, with the exception of locally recruited staff assigned to hourly rates as provided in General Assembly resolution 76(I).

h) "Experts on mission" means individuals, other than UNHCR officials or persons performing services on behalf of UNHCR, undertaking missions for

UNHCR.

i) "Persons performing services on behalf of UNHCR" means natural and juridical persons and their employees, other than nationals of the host country, retained by UNHCR to execute or assist in the carrying out of its programmes.

j) "UNHCR personnel" means UNHCR officials, experts on mission and persons performing services on behalf of UNHCR.

Article II Purpose of this Agreement

This Agreement embodies the basic conditions under which UNHCR shall, within its mandate, co-operate with the Government, open an office or offices in the country, and carry out its international protection and humanitarian assistance functions in favor of refugees and other persons of its concern in the host country.

Article III Co-operation between Government and UNHCR

1. Co-operation between the Government and UNHCR in the field of international protection of, and humanitarian assistance to, refugees and other persons of concern to UNHCR shall be carried out on the basis of the Statute of UNHCR, of other relevant decisions and resolutions relating to UNHCR adopted by United Nations organs, of article 35 of the Convention relating to the Status of Refugees of 1951 and article 2 of the Protocol relating to the Status of Refugees of 1967.

2. The UNHCR Office shall maintain consultations and co-operation with the Government with respect to the preparation and review of projects for refugees and other persons of concern.

3. For any UNHCR-funded projects to be implemented by the Government, the terms and conditions including the commitment of the Government and the High Commissioner with respect to the furnishing of funds, supplies, equipment and services or other assistance for refugees shall be set forth in project agreements to be signed by the Government and UNHCR.

4. The Government shall at all times grant UNHCR personnel unimpeded access to refugees and other persons of concern to UNHCR and to the sites of UNHCR projects in order to monitor all phases of their implementation.

Article IV UNHCR Office

1. The Government welcomes that UNHCR establishes and maintains an office or offices in the country for providing international protection and humanitarian assistance to refugees and other persons of concern to UNHCR.

2. UNHCR may designate the UNHCR Office in the country to serve as a Regional/Area office.

3. The UNHCR Office will exercise functions as assigned by the High Commissioner, in relation to his mandate for refugees and other persons of his concern, including the establishment and maintenance of relations between UNHCR and other governmental or non-governmental organizations functioning in the country.

Article V UNHCR personnel

1. UNHCR may assign to the office in the country such officials or other personnel as UNHCR deems necessary for carrying out its international protection and humanitarian assistance functions.

2. The categories of officials and the names of the officials included in these categories, and of other personnel assigned to the UNHCR Office in the country, shall from time to time be made known to the Government.

3. UNHCR officials, experts on mission and other persons performing services on behalf of UNHCR shall be provided by the Government with a special identity card certifying their status under this Agreement.

4. UNHCR may designate officials to visit the country for purposes of consulting and co-operating with the corresponding officials of the Government or other parties involved in refugee work in connection with:

- a) the review, preparation, monitoring and evaluation of international protection and humanitarian assistance programmes;
- b) the shipment, receipt, distribution or use of the supplies, equipment, and other materials, furnished by UNHCR;
- c) seeking permanent solutions for the problem of refugees; and
- d) any other matters relating to the application of this Agreement.

Article VI

Facilities for implementation of UNHCR Humanitarian programmes

1. The Government, in agreement with UNHCR, shall take any measure which may be necessary to exempt UNHCR officials, experts on mission and persons performing services on behalf of UNHCR from regulations or other legal provisions which may interfere with operations and projects carried out under this Agreement, and shall grant them such other facilities as may be necessary for the speedy and efficient execution of UNHCR humanitarian programmes for refugees in the country. Such measures shall include the providing for communication facilities in accordance with Article IX of this Agreement; the granting of air traffic rights and the exemption from aircraft landing fees and royalties for emergency relief cargo flights, transportation of refugees and/or UNHCR personnel.

2. The Government, in agreement with UNHCR, shall assist UNHCR officials in finding appropriate office premises, and shall put them at the disposal of UNHCR free of charge, or at a nominal rent.

3. The Government, in agreement with UNHCR, shall make arrangements and provide funds up to a mutually agreed amount, to cover the cost of local services and facilities for the UNHCR office, such as establishment, equipment, maintenance and rent, if any, of the office.

4. The Government shall ensure that the UNHCR Office is at all times supplied with the necessary public services, and that such public services are rendered on equitable terms.

5. The Government shall take all appropriate measures to ensure the safety and security of UNHCR personnel. In particular, it shall take all appropriate steps to protect UNHCR personnel and the UNHCR Offices premises and equipment from attack or any action that prevents UNHCR personnel from discharging UNHCRs mandate. This is without prejudice to the fact that all premises of UNHCR Offices are inviolable and subject to the exclusive control and authority of UNHCR.

6. The Government shall facilitate the location of suitable housing accommodation for UNHCR personnel recruited internationally.

Article VII

Privileges and immunities

The Government shall apply to UNHCR, its property, funds and assets, and to its officials and experts on mission the relevant provisions of the General Convention.

Article VIII UNHCR Office, property, funds and assets

1. Any materials imported, exported or purchased in the country by UNHCR, by national or international bodies duly accredited by UNHCR to act on its behalf in connection with humanitarian assistance to refugees, shall be exempt from all customs duties, prohibitions and restrictions, as well as from direct and indirect taxation.

2. UNHCR shall enjoy the most favorable legal rate of exchange.

Article IX Communication facilities

The Government shall ensure that UNHCR be enabled to operate effectively and free of license fees its own radio and other telecommunications equipment, including satellite communications systems, on networks using the frequencies assigned by or co-ordinated with the competent national authorities in conformity with the applicable International Telecommunication Union's regulations and norms currently in force.

Article X UNHCR Officials

The UNHCR Representative and Deputy Representative, and other senior officials shall enjoy, while in the country, in respect of themselves, their spouses and dependent relatives, the privileges and immunities, exemptions and facilities normally accorded to diplomatic envoys. For this purpose the Ministry of Foreign Affairs shall include their names in the Diplomatic List.

Article XI Locally recruited personnel assigned to hourly rates

1. Persons recruited locally and assigned to hourly rates to perform services for UNHCR shall enjoy immunity from legal process in respect of words spoken or written and any act performed by them in their official capacity.

2. The terms and conditions of employment for locally recruited personnel shall be in accordance with the relevant United Nations resolutions, regulations and rules.

Article XII Persons performing services on behalf of UNHCR

Except as the Parties may otherwise agree, the Government shall grant to all persons performing services on behalf of UNHCR, other than nationals of the host country employed locally, the following privileges and immunities:

- (a) Be immune from legal process in respect of words spoken or written and all acts performed by them in their official capacity;
- (b) Be exempt from taxation on the salaries and emoluments paid to them by the United Nations;
- (c) Be immune from national service obligations;
- (d) Be immune, together with their spouses and relatives dependent on them, from immigration restrictions and alien registration;
- (e) Be accorded the same privileges in respect of exchange facilities as are accorded to the officials of comparable ranks forming part of diplomatic missions to the Government concerned;
- (f) Be given, together with their spouses and relatives dependent on them, the same repatriation facilities in time of international crisis as diplomatic envoys;
- (g) Have the right to import free of duty their furniture and effects at the time of first taking up their post in the country in question.
- (h) Prompt clearance and issuance, without cost, of visas, licenses or permits necessary for the effective exercise of their functions;
- (i) Free movement within, to or from the country, to the extent necessary for the implementation of the UNHCR humanitarian programmes.

Article XIII Settlement of disputes

Any dispute between the Government and UNHCR arising out of or relating to this Agreement shall be settled amicably by negotiation or other agreed modes of settlement, failing which such dispute shall be submitted to arbitration at the request of either Party. Each Party shall appoint one arbitrator, and the two arbitrators so appointed shall appoint a third, who shall be a chairman. If within thirty days of the request for arbitration either Party has not appointed an arbitrator or if within fifteen days of the appointment of two arbitrators the third arbitrator has not been appointed, either Party may request the President of the International Court of Justice to appoint an arbitrator. All decisions of the arbitrators shall require a vote of two of them. The procedure of the arbitration shall be fixed by the arbitrators, and the expenses of the arbitration shall be borne by the Parties as assessed by the arbitrators. The arbitral award shall contain a statement of the reasons on which it is based and shall be accepted by the Parties as the final adjudication of the dispute.

Article XIV General provisions

1. This Agreement shall enter into force on the date of notification of the United Nations High Commissioner for Refugees by the Government of its ratification, and remain in force for indefinite period of time.

2. This Agreement shall be interpreted in light of its primary purpose, which is to enable UNHCR to carry out its international mandate for refugees fully and efficiently and to attain its humanitarian objectives in the country.

3. Any relevant matter for which no provision is made in this Agreement shall be settled by the Parties in keeping with relevant resolutions and decisions of the appropriate organs of the United Nations. Each Party shall give full and sympathetic consideration to any proposal advanced by the other Party under this paragraph.

4. Consultations with a view to amending this Agreement may be held at

the request of the Government or UNHCR. Amendments shall be made by joint written agreement. The amendments shall enter into force in the manner as prescribed by the first paragraph of this Article.

5. This Agreement shall cease to be in force six months after either of the contracting Parties gives notice in writing to the other of its decision to terminate the Agreement.

Concluded in Yerevan on 22 November 2004, in two original copies, each in Armenian and English and both texts being equally authentic.

The Agreement has entered into force on 06.04.2006.